Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ

12.08.2025

«Սիրելի՛ երիտասարդներ,
Շնորհավորում եմ ձեզ Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ:
Այս օրը նշանավորում է երիտասարդության դերը մեր հասարակության կայացման, զարգացման և առաջընթացի գործում: Դուք՝ երիտասարդներդ, Հայաստանի վաղվա օրն եք, դուք եք պետության զարկերակը, նորարարության և ստեղծագործ մտքի հիմնական շարժիչ ուժը:
Մեր մարզը հպարտ է իր ակտիվ, ուսյալ ու հայրենասեր երիտասարդներով, ովքեր իրենց եռանդով, մտահղացումներով ու նախաձեռնություններով նոր լույս են բերում համայնքների զարգացման ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներում:
Ձեր ձայնը կարևոր է, ձեր մասնակցությունը՝ անփոխարինելի:
Մարզպետարանի կողմից շարունակելու ենք աջակցել ձեր նախաձեռնություններին, խթանել երիտասարդական քաղաքականությունների իրականացումը և ստեղծել հնարավորություններ՝ ձեր գաղափարներն ու տեսլականները կյանքի կոչելու համար:
Թող այս օրը ոգեշնչի ձեզ ավելի համարձակ քայլերի, թող ամեն օր լինի նոր հնարավորություն՝ սովորելու, ստեղծելու և պետության հզորացման գործում ձեր ներդրումն ունենալու համար:
Մաղթում եմ ձեզ հաջողություններ, անսպառ ուժ, վստահություն և հավատ ձեր ճանապարհին»: